



«ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Taxpayers Rights Protection» Public Organization

ք. Երևան, 26.04.16 թ.

Ելք № 025

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ,

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հայտնում ենք Ձեզ, որ հաճախ են լինում դեպքեր, երբ պետական մարմինների կամ հասարակական կազմակերպությունների կողմից գործարար միջավայրի բարելավման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացվում են առաջարկություններ ՀՀ գործող օրենսդրության որոշ դրույթներ փոփոխելու վերաբերյալ:

Ներկայացվող էական առաջարկություններն որպես կանոն մերժվում են և համարվում են անընդունելի կան սկզբունքորեն անընդունելի վարվող քաղաքականության կամ վարչարարության տեսանկյունից կամ այլ ցանկացած հիմնավորմամբ: Սակայն, որոշ ժամանակ անց (1,2 կամ 3 տարի) նույն ՀՀ ֆինանսների նախարարության կամ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից նույն այդ առաջարկությունները տեղ են գտնում նշված մարմինների կողմից մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթներում՝ որպես գործարար միջավայրի բարելավմանն ուղղված փոփոխություններ: Կոնկրետ դեպքերը առկա են:

Նման դեպքերում անհասկանալի է դառնում, թե ինչն էր այլ կառույցների կողմից ներկայացված առաջարկությունների մերժման դրդապատճառները:

Եթե այդ ժամանակահատվածում փոփոխվում է ոլորտի քաղաքականությունը, ապա առնվազն տարօրինակ է քաղաքականության փոփոխման վերաբերյալ չհայտարարելը կամ դրա մասին որևէ փաստաթղթի բացակայությունը:

Մյուս կողմից, եթե առաջարկությունները մերժվում են միմիայն այն պատճառով, որ առաջարկությունները ներկայացվել են այլ կառույցների կողմից, ապա կարծում ենք, որ նման դեպքերում իմաստագուրկ են դառնում ՀՀ ֆինանսների նախարարություն և(կամ) ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե պաշտոնական հայտարարությունները կամ հրապարակումները գործարար միջավայրի բարելավման մասով գործընկերային հարաբերություններ ձևավորելու անհրաժեշտության և պատրաստակամության վերաբերյալ:

Նպատակ չունենալով հավակնել օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մասով հեղինակային իրավունքներին, այլ շահագրգիռ լինելով խնդրահարույց հարցերի արագ կարգավորմանը, կարծում ենք, որ տնտեսական ներկա փուլում նպատակահարմար է օրենսդրության էական բարելավումների վերաբերյալ առաջարկություններն քննարկել ընդհանուր տնտեսության տեսանկյունից, երկարաժամկետ հեռանկարով, ոչ թե կարճաժամկետ եկամտային խնդիր կարգավորելու համատեքստում, այլ բազմակողմանի և հաշվի առնելով նաև հնարավոր ուղղակի և անուղղակի այլ ազդեցությունները:

Միաժամանակ, խնդրում ենք նշված գրությանը պատասխանելու դեպքում հղում չանել ՀՀ հարկային օրենսգրքի նախագծին:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան